

Գ. ՀԱԿՈՒՅԱՆ

(Անդամ Գերագույն Հոգևոր Խորհրդի)

Գ Ր Ի Գ Ո Ր Տ Ղ Ա *

Ե Ր Կ Ե Ր Ը

Գրիգոր Տղան թողել է թղթեր և մեծ ու փոքր ծավալի չափածո գործեր, որոնք մեծ մասամբ հասել են մեզ և ունեն պատմական ու գրական նշանակություն: Տղայի գործերը ամբողջությամբ դեռ չեն հրատարակվել: Թեև 1835 և 1865 թվականներին Վենետիկում Մխիթարյանները Գրիգոր Տղայի անունով երկու անգամ հրատարակել են «Նամականի» վերնագրով մի գիրք, այնտեղ զետեղվել են Տղայի գործերից միայն երկուսը՝ Գրիգոր Տուտեորդուն և հյուսիսային վարդապետներին գրված թղթերը: Գրիգոր Տղայի անվամբ հրատարակված «Նամականի»-ն ավելի շուտ ներսես և ամբողջացու երկերի ոչ լրիվ մի ժողովածու է, որտեղ զետեղված են և ամբողջացու «Ատենաբանություն», «Թուղթ առ Քրիստոսասէր թագաւորն Հայոց Լեւոն», «Բարեբանություն ներքողական գովաբանութեամբ ի Համբարձումն Տեառն...», «Ներքողական ասացեալ ի հրաշափառ գալուստն յերկինս Հոգւոյն Սրբոյ» գործերը:

Այսպիսով, Գրիգոր Տղայի թղթերի մեծ մասը դուրս է մնացել Վենետիկյան վերահիշյալ երկու հրատարակություններից: Տղայի մյուս թղթերից երեքը⁴⁰ հրատարակվել են ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական» գրքում, որոնք են՝ «Թուղթ... առ բարեպաշտ թագաւորն Հոռոմոց Մանուէլ», «Թուղթ Գրիգորիսի կաթողիկոսի Հայոց՝ ձայնակցութեամբ ընդհանուր ժողովոյ Հայոց՝ պատասխանի թագաւորին Հոռոմոց Մանուէլի...» և

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № ԺԲ-ից և 1965 թվականի № Ա Ա-ից և Ե-Ձ-Է-ից:

⁴⁰ «Թուղթ ընդհանրական»-ում կա նաև հյուսիսային վարդապետներին գրված թուղթը, որը տպագրված է «Նամականի»-ում: Դրա համար էլ մենք «Ընդհանրական»-ում տպված չորս թղթերից միայն երեքն ենք հիշատակում:

«Պատասխանի թղթոյն Միքայէլի պատրիարքին...»: Ուրեմն, Գրիգոր Տղայի թղթերից միայն հինգն են տպագրվել, երկուսը՝ «Նամականի» գրքում և երեքն էլ Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ում: Մնացած արձակ թղթերը դեռ ձեռագիր վիճակում են և որոնք հետևյալներն են.

«Հարցումն խրատուց զոր խնդրեալ է կաթողիկոսն Հայոց Գրիգոր Տղայն կոչեցեալ ի մեծապատիւ վարդապետէն Գրիգորէ որդւոյ Տուտեայ...»⁴¹:

«Գիր ողջունի և հարցումն խրատու Տեառն Գրիգորի Հայոց կաթողիկոսի Տղայն կոչեցելոյ՝ առ մեծապատիւ վարդապետին Գրիգորի որդի Տուտեայ...»⁴²:

Եթե Գրիգոր Տղայի արձակ թղթերի մի մասը տարբեր ժամանակներում և տարբեր տեղերում տպագրվել է, ապա նրա չափածո գործերը՝ ոտանավորներն ու պոեմները մինչև հիմա ոչ մի անգամ չեն տպագրվել, եթե չհաշվենք 1869 թվականին ֆրանսիացի բանասեր-գիտնական Դելիլյուեի ձեռքով ֆրանսերեն հրատարակված «Ողբ վասն առմանն Երուսաղէմի» մեծ պոեմը՝ հայկական բնագրի հետ միասին: Մեր բանասիրության մեջ ընդունված է Գրիգոր Տղային վերագրել միայն վերահիշյալ պոեմը և երկու փոքրիկ ոտանավոր⁴³: Սակայն փաստորեն այդպես չէ: Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի մի շարք ձեռագրերում կան բազմաթիվ մեծ ու փոքր ոտանավորներ (սկսած 20, վերջացրած 700 տողով), որոնք պատկանում են Գրիգոր Տղայի գրչին և դեռ կարոտ են ուսումնասիրության ու հրապարակման: Ա-

⁴¹ Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 2966, էջ 47:

⁴² Անդ, էջ 49:

⁴³ «Արարատ», Էջմիածին, 1893, էջ 1008—1009:

հա՛ ձեռագրերում եղած այդ շափածո գործերի մեղ ծանոթ ցուցակը՝ ըստ գրվածքների սկզբնատողերի.

1. «Ասացից բան մի», ձեռ. 5707, էջ 265:

2. «Գոյ յիս գիտութիւն բայց խամբեալ է», ձեռ. 8348, էջ 167:

3. «Յիսուս Քրիստոս Որդի և Բան», ձեռ. 5707, էջ 259:

4. «Բան մաղթանաց հեծեծանաց», ձեռ. 6348, էջ 168:

5. «Յորժամ զիս ինձէն դտայ», ձեռ. 5707, էջ 267:

6. «Գրեցաւ այս գիր», ձեռ. 4207, էջ 357:

7. «Գովելեացն յուսացեալ», ձեռ. 5707, էջ 265:

8. «Կտակ...» (մանկավարժական բնույթի մի-քանի ոտանավորներ), ձեռ. 4207, էջ 357:

9. «Բան պիտանի Գրիգորիսի կաթողիկոսի» («Արարատ», 1893 թ., էջ 1002):

10. «Զինչ լոյս և լոյս» («Արարատ», նույն տեղում):

Թղթերը. — Գրիգոր Տղայի գրչին պատկանող թղթերը կամ նամակները թվով յոթ հատ են: Թեպետ այս թղթերը գրելու հիմնական դրդապատճառը եղել է եկեղեցիների միության խնդիրը, սակայն այդ թղթերում միաժամանակ շոշափվել են նաև պետական, հասարակական, ազգային և քաղաքական բնույթի հարցեր, որոնք զուրկ չեն պատմական և հայրենասիրական նշանակությունից: Գրիգոր Տղայի առաջին թուղթը, «... Առ բարեպաշտ թագաւորն Հոռոմոց Մանուէլ» վերնագրով, գրված է 1174 թվականին: Այս թղթում Տղան, հետևելով Շնորհալույն, անկեղծորեն ձգտում էր եկեղեցիների միության գործը գլուխ բերել «հաւասար ընդ հաւասարա»: Հավատալով կայսեր խոսքերին, իրավացիորեն նկատում է Մ. արքեպիսկոպոս Օրմանյանը, «Գրիգոր Տղան շատ ուրախացավ, որ կայսրը իրեն ալ կցուցնէ այն հարգանքն ու վստահութիւնը, զոր իր պատվական հորեղբորը ցուցուցած էր»⁴⁵: Այսպէս այդ պատասխան թղթում Գրիգոր Տղան, ներսես Շնորհալու «Գիր հաւատոյ» դավանաբանական գրվածքի ոգով ու սկզբունքներով, շարադրում է Հայ Եկեղեցու դիրքը եկեղեցիների միության հարցում: Այս թուղթը գրված է մաքուր հայկաբանությամբ, պատկերավոր արտահայտութիւններով, պարզ, դյուրըմբռնելի լեզվով և կուռ տրամաբանությամբ: Ավելի ուշագրավ է Գրիգոր Տղայի երկրորդ թուղթը, գրված 1179 թվականին,

դարձյալ հասցեագրված Կիո Մանվել թագավորին, հետևյալ ընդարձակ վերնագրով. «Թուղթ Գրիգորիսի կաթողիկոսի Հայոց, ձայնակցութեամբ ընդհանուր ժողովոյ հայոց պատասխանի թագաւորին Հոռոմոց Մանուէլի, յորում և ուղղափառ դաւանութիւն ըստ խնդրոյ արքային, ձայնակցությամբ և ձեռնագրով ամենայն Հայաստանեայց եպիսկոպոսաց»⁴⁶: Այս թղթի բովանդակությունը Հոռոմիլայի ժողովի սկզբունքներն են. Հայ Եկեղեցին, ձգտելով անշահախնդիր միության, երբեք տրամադիր չէ նահանջելու իր առաքելական ուղղութիւնից և հայրենի ավանդութիւններից. «... և ի քաղցրութենէ պտղոյս ծանեալ ըզժառոգ, որպէս և միշտ գիտէալ պտղաբերիչ ուղղափառութեան և հաստիչ հայրենի աւանդութեանցն՝ զոր յԵկեղեցի Սուրբ Գիրք. այլ զի ձայնակից սոյն ուղղափառութեան է Սուրբ Եկեղեցիս Աստուծոյ որ ի մեզ... և մեք աշակերտեալք և ուղղափառ դաւանութեանն քարոզը»⁴⁶:

Հայոց հավատի հիմքը, — գրում է Գրիգոր Տղան Մանվելին ուղղված այս նամակում, — դրել են մեր երանելի հայրերը, որոնք քրիստոնեական վարդապետության լայն պողոտայի մեջ ունեն իրենց ազգային, սեփական անշեղ և ճիշտ շավիղը, որը ո՛չ ուղղվելու, ո՛չ լայնացվելու և ո՛չ էլ նորաձե ծեսերով ու դավանանքներով լրացվելու կարիքն ունի: Հայոց հայրապետը շեշտում է, որ հայերը կողմնակից են եկեղեցիների անկեղծ միության և միաժամանակ ցանկանում են անասան մնալ իրենց հայրենի ավանդութիւնների վրա: Այնուհետև, հիշեցնելով Մանվելին, որ Հայ Եկեղեցու դավանանքի վերաբերյալ տարիներ առաջ ներսես Շնորհալին մանրամասնորեն գրել է իրեն և որ այդ ուղուց հայերը երբեք չեն շեղվելու, շարունակում է. «... Բայց և փոքր ինչ երկրորդեմք առ ի յայտարարութիւն ընթացակցութեան հօրն մեր անստերիւր շաւղաց, քանզի և ինքն ընդ երանելիս հանգուցեալ հայրն մեր յայս ճշմարիտ և պատուական հիման վերայ շինեալ եկն և եգիտ զեկեղեցիս հայոց անշարժ և առանց արատոյ, որպէս և յայտ արար ձեզ. ոչ եթէ նորոգ եմուտ ի մեզ ուղղափառութիւնն, այլ զոր ունէալ, նոյն և յայտնեցաւ»⁴⁷: Եվ քանի որ հայերը սնված ու դաստիարակված են իրենց երանելի նախնիների նվիրական գաղափարներով ու ոգով, ուստի, պարտավոր են անխոտոր ընթանալու նրանց զօած ուղիով. «Յայս ուղղափառ ժողովոցս

⁴⁵ Անդ, էջ 250:

⁴⁶ Անդ, էջ 251:

⁴⁷ Անդ:

⁴⁴ Մ. արքեպիսկոպոս Օրմանյան, «Ազգապատում», Ա, էջ 1450:

և որք սոցին հանգոյն՝ ուսաք զհաւատոյ դաւանութիւն, և ի նոցին կանոնադրութենէ զգործոց պարկեշտութիւն և զմեղաց խտրութիւն և զեկեղեցական կարգաց վայելչութիւն, որոց և առաջնորդութեանն հայրենի դաստիարակութեամբք ուղեկից լինիմք զգուշացեալք առ ի յոչ խտառել յաջ և ոչ յանեակ յաբփունական պողոտայէն զոր ցուցին մեզ»⁴⁸։ Վերոհիշյալ համարձակ և շիտակ հայտարարութիւններէց հետո, թղթի վերջում Գրիգոր Տղան Մանվել թագավորից պահանջում է, որ նա ձեռք առնի ամեն միջոց՝ քրիստոնեական խաղաղության թշնամիներին սանձահարելու, որպէսզի երկրի վրա, բոլոր ազգերի մեջ, հաստատվի Հիսուսի քարոզած սերը և եղբայրութիւնը. «Եւ պահանջեմք ըստ քում հրամանի զաշխարհական հոգոց ծանրութիւն տիեզերական տերութեանդ... արեամբ չափ ճգնել ընդդէմ հակառակամարտին խաղաղութեան, և հնարել ամենայն փութով զայս գործոյ կատարումն»⁴⁹։

Գրիգոր Տղայի թղթերի մեջ ուշագրավ են նաև այն նամակները, որոնք ուղղված են Արևելյան Հայաստանի վարդապետներին։ Դրանցից մեկը հասցեագրված է «Վարդապետացն հիւսիսային կողմանցն», իսկ մյուսները՝ Սանահնի վանահայր Գրիգոր Տուտեորդուն։

Հուլյների հետ եկեղեցական միության հարցում արևելյան վարդապետները կանգնել էին պահպանողական և հայրենասիրական ճիշտ դիրքերի վրա։ Անցյալի փորձով նրանք համոզվել էին, որ հուլյների հետ եկեղեցական միութիւնը կվնասի Հայ Եկեղեցու անկախության և ինքնուրույնության։

Իր թղթում Գրիգոր Տղան, ելակետ ունենալով Հովհաննու Ավետարանի «Միքելիք, սիրեսցուք զմիմեանս, զի Աստուած սէր է» սկզբունքը, լայնացնում և խորացնում է քրիստոնեական սիրո և եղբայրության գաղափարները։ Գրիգոր Տղան գրում է, որ տարբեր ազգերի ու երկրների մեջ պետք է թագավորի համերաշխութիւն և խաղաղութիւն։ Եթե տեղն ու ժամանակը ազգերին ու մարդկանց ֆիզիկական իրարից հեռու են պահում, բայց դա չպիտի լինի պատճառ, որ նրանք միմյանց նկատմամբ օտարանան և որ վատթարագոյնն է՝ թշնամանան. «այլ իբրև զհեռացեալ եղբարք գաւառաւ և ժամանակաւ, որ և զայս թշնամութիւն գործեաց բնութիւն հնացեալ սովորութեամբք ոխակալութիւնն՝ զմիջնորմն ցանկոյն քակել, և զկրճիմն ի բաց բառնալ, եթէ գոյ հնար» և

մի անիծանել յեղբարցս՝ այլ օրհնել, շահել և շահեցուցանել զնոսա»⁵⁰։ Այնուհետև խորհուրդ է տալիս հյուսիսային վարդապետներին, որ լինեն անաշու։ Եթե մեկը անհողդողդ է իր համոզմունքների մեջ, սիրում է իր ազգն ու ազգային ավանդույթները, նա պարտավոր է ճշմարիտ դատողությամբ հաշվի առնել և քննել նաև ուրիշի կարծիքները. «ոչ վայել է յաստուածաշունչ գիրս զմիոյ բանէ բուն հարկանել և զայլովքն զանց առնել և կամ հայհոյել ի լուրս բանին և զմիտս ոչ քննել»⁵¹։ Ապա խորհուրդ է տալիս թե՛նքն զգիրս աշխատասէր սրտիւ։ «Դուք, — դիմելով վարդապետներին ասում է նա, — մշակք էք աստուածային անդոյս, աշխատասէր մտօք և հնազանդ սրտիւ. պարտիք վաստակել՝ զի բերցէ հաց սուրբ և կենդանական, ամուլք էք պատուական սալլից, որ դատարկացեալ մնայ ի շրջեցուցանելոյ զկտակարանս Աստուծոյ»⁵²։

Գրիգոր Տուտեորդին Տղային խուսափողական պատասխան էր գրել Հռոմկլայի ժողովից հետո Հայ և Հուլյն եկեղեցիների միության հարցի շուրջ, առարկելով, որ ինքը ապրում է իր կյանքի երեկուն և ժամանակները դառն են ու ծանր։ Գրիգոր Տղան հայրաբար քննադատության է ենթարկում նրա այդ խուսափողական դիրքը և բարեկամաբար հորդորում է լինել ձեռնբեց և վճռական. «Այլ զի գրեցէքն՝ եթէ յերեկոյացեալն եմք ժամու, թողուլ զնալ առ իւրաքանչիւր դատաւոր, և այս բանք ոչ թուեցաւ մեզ իբրև կատարելոց մտաց ասացեալ... ապա պարտի ծերոյն լինել ծերութիւնն ի ձէթ պարարութեան՝ ըստ Դաւթայ և Սողոմոնի... և պարկեշտութեամբ լուսատու լինել բազմաց և մի լսել եթէ լաւ է մանուկ իմաստուն՝ քան զծեր անմիտ»⁵³։

«Իսկ եթէ զաւուրցս շարութիւն կոչեք երեկոյ և զտէրութիւնն բռնակալաց՝ անտեղի է, զի ամենայն սրբոց և բարեպաշտից անձինք դառնագոյն ժամանակօք փորձեցան և մաքրեցան որպէս զոսկի հրով և արդարացան. և այս առ հնովքն և նորովքս...»⁵⁴։ Եվ վերջապես, այս նշանավոր թղթում արտահայտվել են ժամանակի հայրենասիրական տրամադրութիւնները։ Եթե մեր հակառակորդը փորձի իր խորթ գաղափարներով մեզ մոլորութիւն մեջ քաշել, — ասում է Գրիգոր Տղան, — շեղել մեզ մեր հայրերի ճշմարիտ

⁵⁰ Անդ, էջ 443.

⁵¹ Անդ, էջ 442.

⁵² Անդ, էջ 453—454.

⁵³ Անդ, էջ 449.

⁵⁴ Անդ, էջ 450.

⁴⁸ «Ազգապատում», Ա, էջ 253.

⁴⁹ Անդ, էջ 265.

ամբուց, մենք ոչ միայն շպետք է շեղ-
վենք, այլև անհրաժեշտ է որ զինվենք մեր
աշխարհային լուսավոր գաղափարներով և
այսօրվա մեր հավատի ուղղափառու-
թյունը. «Առ մեզ մի լիցին խոտելիք մեր
տուրքը լուսավորիչը և հարբ. այլ պատուելիք
պաշտելիք՝ Սուրբ Գրիգորիս, և զարմ-
ուր սուրբ, Սուրբ Ներսէս և Իսահակ և որ
ստ նոցայն յստակքն և ճշմարտախոհքն, և
նոցայն բարոգեսցի բաշտելին յեկեղեցիս
մեր, և յաղագս նոցա բանակուեսցուք. եթէ
նոցին հակառակք, որ նոցայն են՝ իւրեկեցի
գիտելի, լաւութիւն և վատութիւն նոցա»⁵⁵։
Գրիգոր Տղան ցանկանում է, որ Հայ Եկե-
ղեցին և հայ ժողովուրդը լինեն «ծառ մեծ»
Մինչ զայն վայրենի թռչնոց և հանգչէին յոստ
Մեր»⁵⁶։ Ապա խրատում է թղթի հեղինակը՝
«... որ հյուսիսային վարդապետները
ախտ են ունեցել ապրելու բուն, հայրենի
ժողի վրա՝ իրենց ժողովրդի մեջ, Կիլիկիայի
ճոգեկորականութեան նման գրկված չեն Մայր
Հայրենիքից, ուստի նրանք խոշոր անելիք
ունեն ազգին ու նրա Եկեղեցուն ծառայելու
անազատութեամբ։ Նրանք ի վիճակի են նման-
վելու վերևում հիշված պտղատու ծառին։
Ավելին. այդ վարդապետները պարտավոր
են օգնելու և Կիլիկիայի հայերին ու Հայրա-
պետանոցին։ Նրանք հոգեկան ուժ պետք է
լինեն ոչ միայն Մայր Հայաստանի, այլև
Կիլիկիայի հայութեան համար։ Հետո մեղմ
ստոնով հանդիմանում է հյուսիսայիններին,
որ հեռվից, ոչ ճիշտ լուրերի հիման վրա, դի-
տողագիր գրել կաթողիկոսի գործունեության
վերաբերյալ և քննադատելը քիչ է, և դա հեշտ
գործ է. պետք է մոտիկ լինել սրտով, ապրել
Կիլիկիայի հայերի վիճակով ևս, ու օգնել
նրանց. ահա այս է կարևորը։ Որ Գրիգոր
Տղան ինքը հոգով սերտ կապված է հյուսի-
սային վարդապետների հետ, կարոտ է նրանց
եղբայրական օգնության ու խորհուրդներին,
նամակում ցույց է տրված հետևյալ համեստ
խոսքերով. «Իշխանք էք և հազարապետք
խորոցն Աստուծոյ, և այժմ խնդիր է ի մէջ
հազարապետացդ՝ եթէ՛ որ հաւատարիմ
մտցի. աչք էք՝ գլխոյս լուսատու, և ձեռք՝
գարմնոյս կերակրիչք. բան և ձայն լեզուիս
շարժողի, արագ այսր պարտիք ժամանել՝
զի թերևս թիրեալ իցէ գլուխս ի լուսոյ պա-
կասեալ, և կամ տկարացեալ իցէ մարմինս
յոչ ունելոյն կերակրիչ և դարմանիչ ձեռս, և
կամ դատարկանալ լեզուիս շարժումն առանց
ձայնի և անբան մնացեալ. գրեալ են ա-
նուանք ձեր ի գիրս գիտնականաց ասողաց և

յանդիմանողաց, պարտիք զգիրն գործով
արդարացուցանել...»⁵⁷։

Եթե դուք, իրոք, մոտիկ կանգնած մարդիկ
լինեիք Կիլիկիայի հայկական կյանքին,—
շարունակում է Գրիգոր Տղան,— ծանոթ լի-
նեիք նրա պայմաններին, տեսնեիք, թե ինչ-
պես են ապրում ձեր եղբայրները, իմանա-
լիք Հայրապետանոցի և կաթողիկոսի գոր-
ծունեությունը, այն ժամանակ, «... թերևս
լուծցէ զկարծիս մտաց ձերոց և զմերս հաւ-
ատանցէ նշմարիտ հայութիւն և զհամա-
ձայնութիւն ձերս»⁵⁸։ Իր ասածները հաստատե-
լու և այդ վարդապետների վրա ազդելու հա-
մար, թղթի վերջում ասում է, թե ո՛րքան
ծանր է Կիլիկիայի հայերի և Հայրապետա-
նոցի դրությունը, ո՛րքան դժվար է և պա-
տասխանատու այդպիսի պայմաններում լի-
նել ժողովրդի և Եկեղեցու հովիւ ու շկարողա-
նալ օգնել այդ ժողովրդին։ Այս դրությունը
ծանր ապրումներ է պատճառում Մայր Հայ-
րենիքից հեռու ապրող հայրենասեր հայրա-
պետին։ Նա դառնորեն ողբում է իր ցրված
ժողովրդի ճակատագիրը. «... Մինչև ե՛րբ,
Տէր, անտես առնես և ոչ լուիցես ինձ. և թէ
որովայն իմ ցաւէ և զգայարանք իմ ճմլին.
և թէ ո՞ տայր գլխոյ իմոյ ջուր և աչաց իմոց
աղբիւրս արտասուաց՝ լալ բեկումն ժո-
ղովրդեան իմոյ»⁵⁹։

Գրիգոր Տղան Սանահինի վանքի վանա-
հայր Գրիգոր Տուտեորդուն գրել է 3 թուղթ։
Այդ թղթերից մեկը և ամենածավալունը,
ինչպես ասացինք, տպագրվել է «Նամակա-
նի» կոչված գրքում. մնացած երկուսը ամ-
բողջութեամբ տակավին ձեռագիր վիճակում
են։ Ընդունված է, որ իբր թե Գրիգոր Տղան
Տուտեորդուն գրել է միայն մի թուղթ։ Ըն-
դունված է նաև, որ Գրիգոր Տուտեորդին,
Հոռմկլայի ժողովի նախօրյակին, առաջինը
ինքն է գրել կաթողիկոսին, արել որոշ դիտո-
ղություններ, իսկ կաթողիկոսը պատասխա-
նել է Հոռմկլայի ժողովից հետո։ Բայց
ամենևին այդպես չէ։ Տուտեորդու թղթում
կան հաստատ փաստեր, որ նա այդ թուղթը
գրել է կաթողիկոսի պահանջով, այն էլ
դժկամութեամբ, միայն նրա համար, որ կա-
տարած լինի կաթողիկոսի կամբը։ Ահա՛
Տուտեորդու խոսքերը. «Ոչ իբրև լրումն թե-
րատելոց գրեցաք և անգիտս խորոց իմաս-
տութեանց, այլ յակամայ կամս հարկեալ ի
պահանջողէդ զոր ընկալեալ թողցես զմեզ
հանգելոյ»⁶⁰։

⁵⁷ Անդ, էջ 453։

⁵⁸ Անդ, էջ 449։

⁵⁹ Անդ, էջ 450։

⁶⁰ Ձեռ. № 2966, էջ 60։

⁵⁵ «Ազգապատում», Ա, էջ 437։

⁵⁶ Անդ, էջ 455։

ինչպես տեսնում ենք, առաջինը գրել է ինքը կաթողիկոսը: Բայց «չակամայից» գրելով հանդերձ, Տուտեորդին արտահայտվել է շատ համարձակ ու շիտակ: «Սակայն ի ձեռն գրոյ քո և քաղցր հրամանաց բազում անգամ,— ասում է Տուտեորդին,— որ թէ գտանեմք ինչ սխալ անձին և մի մեզ լինիցի մեղադրելի, մանաւանդ խոստովանելի, զի ըստ ազատ բարուց Ստրոտովեայ և ըստ յստակ որդոցս արեւելից փոքր ինչ համարձակեմք ի բանս ճշտութեան»⁶¹:

Այժմ ծանոթանանք Տուտեորդու թղթին, որը գտնվում է Մաշտոցի անվան մատենադարանի № 2966 ձեռագրում: Թղթի սկզբում, հակառակ «նամականի» գրքում եղած Գրիգոր Տղայի թղթի քաղվածքների, Տուտեորդին գործածում է վայելուչ ոճ, հայոց հայրապետի հետ խոսում է հնազանդությանը ու պատկառանքով: Որ «նամականի» գրքում եղած Տղային վերագրվող թուղթը իր մեջբերումների ոգով չի համընկնում ձեռագրում եղած Տուտեորդու թղթի հետ, ցույց են տալիս Տուտեորդու այս թղթի հետևյալ խոսքերը, որոնք համակված են հնազանդությանը ու համեստությանը: Առողջություն և երկար կյանք մաղթելով հայրապետին, նա գրում է. «Ի պարծանս Հայ Եկեղեցւոյ տնօրինել արժանահաս կատարմամբ, զեղեալ հիմունս հաւատոյ ըստ օրինի նախնի... հարց»⁶²: Եթե Տուտեորդին, հակառակ կաթողիկոսական հրավերի, չի գնացել Հռոմկա ժողովին մասնակցելու, այդ եղել է ոչ թե անհնազանդության կամ արհամարհելու պատճառով, ինչպես գրված է Տղայի թղթում, այլ,— բացատրում է Տուտեորդին,— որ Հռոմկա գնալուն խանգարել են մի շարք հանգամանքներ և իր ծերությունը: Ապա նա խնդրում է կաթողիկոսին, որ ըստ իր հասցեին կատարված զրպարտությունները, թշնամաբար չնայի իր վրա, որպես հանդուգնի և ըմբոստի: Բացի այդ, Տուտեորդին հավաստիացնում է հայրապետին, որ ոչ միայն ինքը, այլև արևելյան վանքերում գտնվող վարդապետներից և ոչ մեկն էլ չի ընդդիմանում կաթողիկոսին, կամ զանց առնում նրա ասածներն ու հրամանները. «Ո՞վ ի մերոցս գանիւ ընդդիմահար գտեալ ի հրամանս ձեր. զայդ ոչ ոք կարէ հաստատել բանիւ, բայց եթէ անուղղաթոմանք եկելոցդ... դու մի՛ ունկն դնիցես, որոց ստույթին է ի լեզուին...»⁶³: Վերևում բերված խոսքերը ցույց են տալիս, որ Տղայի և Տուտեորդու բարեկամական հարաբե-

րությունները խառնել են մի քանի անսկզբունք, բանասերկու հոգևորականներ, որոնք Արևելյան Հայաստանից գնացել են Կիլիկիա և կաթողիկոսին հաճոյանալու համար զբաղվել զրախոսությամբ:

Կաթողիկոսի և արևելյան վարդապետների միջև ծագած վեճը սկզբունքային է և կապված է եկեղեցական միության խնդիրներին: Որոշ է արևելյան վարդապետների դիրքը այդ հարցում: Տուտեորդին գրում է. «Եւ ամենայն նախնիք քո այսու անուամբ զարդարեցին առանել պսակել ի ձեռս քո. նովին անուամբ ոսկենկար գրով վկայութեամբ ասել և լինել, որ կա և ունի և կեցցէ մինչև յաւիտեան ի վերայ անդրդուելի վիմին»⁶⁴: Թղթում Տուտեորդին ցավով ու դառնությամբ է խոսում հույների կողմից առաջադրված դավանաբանական «զլխակարգեալ» կետերի մասին. «ցաւ է մեզ» խոսել այդ մասին, գրում է նա, այլ պետք է «խորշել և ի բաց գալ», որովհետև հույները «զողաբար հափշտակել կամին, ընդ միտ մտանել գաղտնի նենգութեամբ, զի՛նչ հաղորդութիւն կայ ասել կամ լսել ընդ նոսա»⁶⁵:

Տուտեորդուն ամենևին դուր չեն եկել Տղայի թղթի այն խոսքերը, թե հույներն ու հայերը հավատակից եղբայրներ են, որ նրանց ժամանակն ու տեղն են բաժանել և օտարացրել: Ահա սրա համար էլ Տուտեորդին առարկում է կաթողիկոսին, թե «Դու զիա՞րդ ասես ազգաւ և աշխարհաւ ունել զհարազատութիւն, թէ պաշտի ի նոսա բանք, նոցա և պատահին անձինք արժանեաց սրբութեան: Զիա՞րդ քաղկեդոնիտք կամ որպէս նեստորիանոսք կամ մակեդոնիտք և այլ ևս շահաց գտակք մի՞թէ ասիցէ որ համախոհք կամ համամիտք ընդ ազգին և ընդ լեզուին, կամ զի՛նչ այնքանեաց տաժանելի կիրք աշխատութեան սրբոյն»⁶⁶: Քանի որ Տուտեորդին շատ խիստ և միակողմանի քննադատության է ենթարկում հույներին, այստեղից որոշ մարդիկ և անգամ ինքը՝ կաթողիկոսը կարող են մակաբերել, թե Տուտեորդին նեղ հայացքներով, ազգամոլ և ալլատյաց մի վարդապետ է, ուստի, որպեսզի մարդիկ այդպես չմտածեն, նա այդ թղթում գրում է. «Զեմք մարդատեաց բնութեամբ և ոչ հակառակ փրկութեան աշխարհի գործոց...»⁶⁷: Տուտեորդու թղթում արծարծված հիմնական խնդիրը այն է, որ առհասարակ, կիլիկեցիք

⁶¹ Ձեռ. № 2966, էջ 53:

⁶² Անդ:

⁶³ Անդ, էջ 54:

⁶⁴ Անդ, էջ 54:

⁶⁵ Անդ, էջ 55:

⁶⁶ Անդ:

⁶⁷ Անդ:

պոռ մնան հույներից, նրանց հետ կրոնական կամ ուրիշ ոչ մի հարաբերություն և մասնակցություն չունենան։ Այնուհետև նա տեսնում է, թե արևելյանների համար այնքան էլ ապրող չէ Տղայի կողմից հույներին գրված թղթերի կրոնական և դավանական խմաստը։ Մեծ այդ ամենն արվում է նրա համար, որ այսինքն միության խնդրում որոշ համաձայնությունների կը գտնեն հույների հետ, սիրաշատ են նրանց, որպեսզի հունահայատակ հայերը ալածանքների չենթարկվին, այդ էլ ներկի ընդունելի չէ, որովհետև, ասում է Տուստեմիրյան, ըստ Ավետարանի՝ հոգևոր գործեր մեզ աշխարհիկ, քաղաքական նպատակներ հետապնդելը ոչ միայն անընդունելի է, այլև մեղք։ Արդյոք ներկի՞ է, կամ բանաստեղծն է, զոհել ազգային անհատականությունը, դարերով սրբազործված ավանդույթները ինչ-որ ժամանակավոր, մարմնական բարօրության համար։ Հաշտվել կրոնական խնդիրներում հույների պահանջների հետ, զիջումներ անել քաղաքական ակնկալություններից ելնելով, այդ միևնույն է թե, զրախացնում է Տուստեմիրյան, «ոտք փորոտով և մաղովն հանդերձ՝ տալ զգլուխն ի ձեռս քցա»⁶⁸։

Հույների դեմ առարկելու և ազգային դավանանքի ինքնուրույնությունը պահպանելու համար, նա Տղային խորհուրդ է տալիս անպայման կարդալ թե՛ Արևելյան և թե՛ Արևմտյան Հայաստանի վանքերին կից դպրատների այն գրքերը, որոնք գտնվում են «շարքից կարող են տալ պատասխանի ընդդեմ պարտացելոցն յոլորտուտ կարծեօք իմաստոց»⁶⁹։ Իսկ ինչ վերաբերում է իրենց՝ սահմանափակումներին և հաղթանակներին, թղթի վերջում գրում է հետևյալը. «Մեք այսպէս աւար և կալցուք յաւիտեան, ոչ երկուցեալ ի պապոնաւեաց և ոչ պարսաւեալք փոքրաբան տգիտութեամբ... պատրաստ եմք մատուցել ձերանբարն տէրունի»⁷⁰։ Ապա ավելացնում է, որ այսպես են մտածում և գործում ոչ միայն իսկ Հայաստանի բոլոր հոգևորականները, այլև հարևան աղվանների եկեղեցական հայրերն ու կաթողիկոսը։ Ահա այս խնդիրներն են արծարծվել արևելյան կամ «հյուսիսային» կոչված հայրերի կողմից, որոնք և կազմում են Տուստեմիրյան թղթի էությունը։

Այժմ տեսնենք, թե ի՞նչպես է այդ թղթին արձագանքել Գրիգոր Տղան։ Մեզ հայտնի չէ Տուստեմիրյան գրած թղթերի ճիշտ ժամանակը,

կը, բայց այնտեղ քննված հարցերը և դեպքերը մոտավորապես ցույց են տալիս, թե դրանք ե՛րբ են գրվել։ Ամենայն հավանականությամբ, Գրիգոր Տղայի և Գրիգոր Տուստեմիրյան միջև եղած այս թղթակցությունները տեղի են ունեցել 1178 թվականից ոչ շուտ և 1180 թվականից ոչ ուշ։ Ուրեմն, դրանք գրվել են կա՛մ 1179 և կա՛մ 1180 թվականներին։ Առաջին թուղթը գլխավորապես վերաբերում է աղվանների եկեղեցական գործերին։ Այս թուղթը Գրիգոր Տղան սկսում է բարյացակամությամբ և պատկառանքով։ Կաթողիկոսը կարևոր նշանակություն է տալիս ծերունի, բանիմաց և փորձառու վանահոր խորհուրդներին, որի համար էլ թուղթը սկսվում է այսպես. «Բարեօք մտածութեամբ և անդրդուելի յուսով ողջունեմք զքեզ ծերունի հայր Գրիգորէ, ճոխացեալ բանականաւ և արդիւնականաւ գործունեութեամբ»⁷¹։

Թեև արևմուտքի հայերի դրուժնուրը ավելի ծանր էր, նրանք ենթակա էին և՛ տնտեսական և՛ բարոյական ճնշման, հույները բռնադատվում էին և՛ խղճի ազատության վրա, բայց հայոց կաթողիկոսը այս պայմաններում նույնիսկ կարողանում է ժամանակ գտնել զբաղվելու նաև հարևան քրիստոնյա ազգերի կրոնաբարոյական գործերով, որպեսզի, ինչպես ինքն է ասում, չխոտորվեն մարդասիրական ճշմարիտ ուղուց. «Ի սաստիկ դառն և յանձուկ և յանբարի ժամանակիս, յորում հեղեղ մեղաց մերոց զօրացեալ եբարձ յերկրէ զամենայն, որ ունիցի հոգևոր շունչ կենդանութեան»⁷²։ Աղվանների հոգևոր Աթոռը թեև կուսավորչի ժամանակներից սկսած ենթակա է եղել հայոց Հայրապետանոցին, վերջինս է տնօրինել նրա կարևոր գործերը, բայց այժմ, երկրի հեռավորությունը և քաղաքական անցուղարձեքը հնարավորություն չեն տալիս, որ Կիլիկիայի հայոց Աթոռը ըստ հարկին կարողանար օգնել աղվաններին։ Սակայն Աղվանների երկրից ոչ այնքան հեռու գտնվող Հաղբատի և Սանահինի վանքերը, որոնք հռչակված են իրենց գիտնական վարդապետներով, ահա դրանց գործակցությանն ու օգնությանն է համեստաբար դիմում ինքը՝ ամենայն հայոց կաթողիկոսը։ Նա խնդրում է Տուստեմիրյան, որպեսզի սա զբաղվի աղվանների հոգևոր գործերով, օգնի նրանց և ընդհանրապես «հոգալ և զտունն Աղուանից և զվերատեսուչն նորա, իբրև զազգականակից զաստիճանակից և զեղբայր»⁷³։

⁶⁸ Ձեռ. № 2966, էջ 55։

⁶⁹ Անդ, էջ 63։

⁷⁰ Անդ։

⁷¹ Անդ, էջ 47։

⁷² Անդ։

⁷³ Անդ, էջ 48։

Մի քանի աղվան եպիսկոպոսներ, իշխաններ և բազմաթիվ հասարակ շինականներ ամբաստանագիր էին գրել իրենց կաթողիկոսի վրա և ուղարկել Գրիգոր Տղային: Բողոքագրում գանգատվում էին սրանք, որ կաթողիկոսն իր դերում չէ, չարաշահում է դիրքը, կրոնական և եկեղեցական գործերին չի կարողանում տալ ճիշտ ուղղություն, ընկած է վարկից և այլն: Այս ամենի հետևանքով էլ աղվան հոգևորականների մեջ տարածվել են անկարգապահություն և շահասիրություն: Այս թերությունները մեծ ցավ են պատճառել Գրիգոր Տղային: Աղվանների հոգևոր գործերի կարգավորությամբ ոչ միայն ինքն է զբաղվում, այլև նա դիմում է Տուտեորդուն և մյուս վարդապետներին, որ օգնեն, շտկեն նրանց ծուռ ընթացքը և տան ճիշտ ուղղություն, քանի որ «Էնդ բարօք լուրն որ ի նոցանէ ուրխաւանալ և ընդ դժուարինս տրտմիլ և հոգալ. և ի գլորումն վտանգաւորութիւն՝ օգնել և կանգնել, որպէս կարեցին նախնիքն մեր և հարքն սուրբք»⁷⁴:

Տղայի այս թղթի երկրորդ մասը վերաբերում է արևմտյան գավառներում ապրող հայ ժողովրդի դրությունը: Հոռմկլայի ժողովը հույներին գրել էր մերժողական պատասխան: Կիո Մանվելը արդեն մահացել էր: Վերջինիս փոխարինող Իսահակ Փիտիկ կոչված կայսրը խիստ սաստկացրեց հայերի հալածանքը, շատերին բռնի քաղկեդոնական դարձրեց: Տուտեորդուն հասցեագրված թղթում այդ մասին Տղան գրում է. «Դարձեալ ծանիր և զայս, իմաստուն տնտես և սպասաւոր բանի, զի թագաւորն Յունաց, յետ բազում հարուածոց և գանից, որով եհար զազգս Հայոց և զսեփական ժողովուրդս մեր՝ որ ընդ տէրութեամբ նորա էին, զրկանօք և զզուանօք՝ և բանդիւք և կապանօք և հալածանօք ի հայրենի տանց և ըստացուածոց և զեպիսկոպոսունս և զբրիցունսն ի մետաղս առաքեաց: Դարձեալ շարժիլ կամի ի շարէն... որպէս և ի գրելոցն նոր տեղեկանայք, մեք որպէս և ընկալաք ի ձէնջ գրով՝ հրաժարեցաք և ի բաց լքաք զամենայն խնդիր որ ի նոցանէ և վասն այնորիկ սաստկացաւ մարտ պատերազմի նոցա ի վերայ մերոցն»⁷⁵:

Գրիգոր Տղան ծանր դրությունը ներկայացնում է արևելյան եղբայրներին և խնդրում նրանց օգնությունը. «...Արդ, աղաչեմք զի և առ այս օժանդակ լիջիք մեզ բարօք խրատով՝ որպէս հայր և օժանդակ»⁷⁶:

Թղթի այս բաժինը բնորոշ է նրանով, որ Գրիգոր Տղան անհրաժեշտ է համարում, որ հայ ժողովուրդը և նրա մտավորականները, գիտնական վարդապետները, բոլորը միացյալ ուժերով պայքարեն խղճի ազատությունը և ազգային արժանապատվությունը ոտնահարող բռնականների դեմ: «Գիտեմք, զի ի նեղութիւն և ի հալածանս կոչեցաք և ոչ ի հանգիստ և ի փառս միայն... Երկնյիմք մեծաւ երկիւղիւ ի տէրունական բանէն, որ ասէ. Հովիւ քաջ զանձն իւր զնէ ի վերայ ոչխարացն, և վարձկան տեսանէ զգայլն և փախչի»⁷⁷:

Իր էությունով և ոգով, Գրիգոր Տղայի երկրորդ նամակը (նույնպես հասցեագրված Գրիգոր Տուտեորդուն), շատ չի տարբերվում առաջինից: Այս թղթում էլ կաթողիկոսը համաստված էր դիմում փորձված «ծերունի հօրը» և խնդրում խորհուրդներ, թե ի՞նչ դիրք բռնի հույների հանդեպ միության խնդիրներում: Վերնագիրն ինքը շատ լավ բնորոշում է այս թղթի էությունը. «Հարցումն խրատու... առ մեծապատիւ վարդապետն Գրիգոր Որդի Տուտեայ, խնդրելով ի նմա բան պատասխանաց թղթին Հոռոմոց, որ էր գրեալ առ նա՝ ցուցանէ նոցա գրով զկարգս եկեղեցական, զխոստովանութիւն հաւատոյ մերոյ»⁷⁸:

Թուղթն սկսվում է բարեմաղթությամբ, որտեղ Գրիգոր Տղան առողջ, երկար և բեղմնավոր կյանք է ցանկանում Տուտեորդուն. «զի հաստատուն մնացէ տունն և անքակտելի մարմինն մեծաջան և քրտնավաստակ աշխատութեան ձերով»⁷⁹:

Փորձված գիտնական վանահայրը անփոխարինելի խորհրդատու է եղել արևելյան հայրերի համար: Բոլորը օգտվել են նրա իմաստուն խրատներից: Վերջիններիս կարիքը զգում է և ինքը՝ հայոց կաթողիկոսը. «և շնորհ ունիմք իբրև ծնողի և հօր», — գրում է Տղան:

Հավանաբար մինչև Գրիգոր Տղայի այս թուղթը, Տուտեորդին նրան գրել է մի ուրիշ նամակ, որտեղ խոսք է եղել հույների պահանջներից հրաժարվելու մասին: Ինչպես վերևում տեսանք, Գրիգոր Տղան լսել է Տուտեորդու խորհուրդները և վարվել ըստ նրա ցուցմունքների:

«Իսկ յաղագս որ Հոռոմոց էր բանին, — գրում է Տղան, — ի խրատականս ձեր ծանեաք հրաժարեալ ի նոցանէ գրով և քննու-

⁷⁴ Ձեռ. № 2966, էջ 48:

⁷⁵ Անդ, էջ 49:

⁷⁶ Անդ:

⁷⁷ Անդ:

⁷⁸ Անդ:

⁷⁹ Անդ:

թեամբ, իբրեւ ի թաքուն աղանդատրաց, բա-
ւական ունել զհարցն աւանդ»⁸⁰:

Թեեւ Գրիգոր Տղան հուլաների դավանած եր-
կու բնությունը մերժել և նրանց գրել է
ժխտողական պատասխան, բայց տարակու-
սանքի մեջ է, թե արդյո՞ք ինքը ճիշտ է վար-
վել, արդյո՞ք իր այդ քայլը չի հակասում
միության և եղբայրության սկզբունքներին:
Այս առթիվ, նա դարձյալ դիմում է Տուտեորդո-
ու օգնությանը. «առ այս առաւել վարանէի
մտօք՝ քան յամենայն հոգս մարմնական և
հոգեկան»⁸¹: Ապա եղբակացնում է, որ լավ
է մարդ շթաքցնի իր երկբայությունները և
տարակուսանքները, և առավել լավ է, որ
մտքի համար ամեն ինչ պարզ ու համոզե-
ցուցիչ լինի, որովհետեւ տգետ մարդն ու ան-
հավատը միեւնոյն բաներն են:

Թե՛ նախորդ և թե՛ այս նամակում, ինչ-
պէս տեսնում ենք, Գրիգոր Տղան ոչ միայն
խիստ ոճով չի խոսել Տուտեորդու հետ, այլ,
ընդհակառակը, բացառիկ համեստութեամբ,
վայելուչ ու հարգալից տոնով է դիմում նրան՝
բոլոր լուրջ հարցերի վերաբերյալ նրա հետ
խորհրդակցելու և նրա կարծիքը հաշվի առ-
նելու նպատակով: Այն խորհուրդները, ո-
րոնք Տուտեորդին տվել է Գրիգոր Տղային,
վերջինս համարել է «հնդկական պողոպա-
տիկ սուր», «ամբազոյն վահան» և «զրահ
հաւատոյ»⁸² և այլն: Իսկ եթե հոգեւոր գործե-
րում ինքը՝ կաթողիկոսն անգամ սխալվի,
միեւնոյն է, պիտի քննադատել՝ ուղղելու
համար. «Եթէ տեսանես զիս մոլորեալ՝ զիս
և զիմքս՝ եռա հոգով... Եթէ որդի ես Աստու-
ծոյ և ժառանգակից Քրիստոսի՝ վարդապե-
տեա ի վայրաբնակ տանս... Աստուածավա-
ճառ եթէ գտանիցիմք՝ ի բաց վարեա»⁸³:
Թղթի վերջում Տղան Տուտեորդու առաջ դնում
է մի լուրջ հարց ևս և պահանջում նրա կար-
ծիքը: Դա այնպիսի մի արմատական հարց
էր, որի շուրջը պտտվում էր ամբողջ այն
վեճը, որ գնում էր արեւելյան և Կիլիկիայի
վարդապետների միջև: Ի՞նչ ձևով հեռանալ
հուլաներից. միանգամից, թե՛ աստիճանա-
բար, կտրո՞ւկ, որոշակի, թե՛ մեղմ ու դի-
վանագիտորեն, սիրո՞ւմ, թե՛ թշնամաբար:
Ահա այս հիմնական խնդիրն էր, որ Կիլիկե-
ցիները չէին կարող, ավելի ճիշտ՝ չէին ուզում
լուծել առանց հյուսիսային հայրերի և մա-
նավանդ առանց Տուտեորդու խորհրդի: Գրի-
գոր Տղան գտնում էր, որ խոհմություն չի
լինի, եթե հուլաներից հեռանան կտրուկ,

միանգամից և թշնամաբար: Հեռանալու այս
եղանակը նա ոչ միայն ճիշտ չէր համարում,
այլև վնասակար ու վտանգավոր: Նա անհրա-
ժեշտ էր համարում գտնել հարմար առիթ,
որպեսզի հեռացումը լինի խաղաղ և հետեա-
բար անվտանգ: Ահա այդ առիթն էր որո-
նում նա և չէր կարող գտնել, որի համար էլ
դիմում է Տուտեորդուն:

Եթե վերևում քննված երկու թղթերում էլ
դրսևորվել է Գրիգոր Տղայի բարյացակամ,
հարգալից և համեստ վերաբերմունքը դեպի
Գրիգոր Տուտեորդին, ապա երրորդ, ծավա-
լով ամենամեծ թղթում, բացակայում են
վայելուչ ոճը, չափի զգացումը, նախորդ նա-
մակներում եղած մեծարանքն ու հարգանքը:
Այստեղ բանավեճը սրվում, հասնում է այն
աստիճանի, որ Գրիգոր Տղան Տուտեորդուն
առաջարկում է միանգամայն խզել կապերը
և այլևս իրեն ոչինչ չգրել: Ի՞նչպես բա-
ցատրել այս անսպասելի փոփոխությունը և
նամակների հակառակ բնույթը: Մենք տե-
սանք, որ Գրիգոր Տղայի և Տուտեորդու փո-
խանակած թղթերում արժարժված խնդիրնե-
րը գրեթե նույնն են: Հիմնականը այդ բոլոր
թղթերում այն է, թե ի՞նչպիսի դիրք պետք է
բռնել միության խնդրում և ի՞նչպիսի հարա-
բերություն պահպանել հուլաների հետ:
Դժբախտաբար, չենք կարողանում ճիշտ ո-
րոշել, թե այս Գրիգորներից ո՞րն է առաջինը
գրել, Տղա՞ն, թե՛ Տուտեորդին, և կամ Տղա-
յի այդ երեք թղթերից ո՞րը ե՞րբ է գրվել:
Առաջ գրվել են բարեկամական ոճով գրված-
նե՞րը, թե՛ այս խստաբան թուղթը: Եթե
առաջ գրվել է վերջինս, ապա մյուս երկու
թղթերում այս կամ այն կերպ պիտի երևար
այդ խստալեզու թղթում արժարժված մտքե-
րը, կամ որեէ այլ բան: Իսկ եթե առաջ գրվել
են այն երկու հավասարակշռված, համե-
րաշխ բնույթ ունեցող թղթերը, ապա հարց է
ծաղում, այդ ինչպե՞ս եղավ, որ այդքան լավ
հարաբերությունը վանահոր և հայրապետի
միջև հանկարծակի այդպես սուր, նույնիսկ
թշնամական բնույթ ստացավ: Որպեսզի կա-
րողանանք որոշ կարծիք կազմել և Տղային
վերագրվող թղթերի մեջ եղած տարբեր ոճի
ու տարբեր վերաբերմունքի պատճառները
գտնել, անհրաժեշտ է ծանոթանալ նաև եր-
րորդ՝ խստաբան թղթի էություն հետ և ապա
քննել դրանց միջև եղած հակադրություն-
ները:

Ամենայն հավանականությամբ այս մեծ
թուղթը գրվել է 1179 թվականին տեղի ունե-
ցած Հոռմկլայի ժողովից հետո: Այս թղթում
Գրիգոր Տղան ամեն կերպ աշխատում է մե-
ղադրել Տուտեորդուն, որ նա կաթողիկոսին և
Հոռմկլայեցվոց զրպարտում է, որ Հոռմկլա-

⁸⁰ Ձեռ. № 2966, էջ 50:

⁸¹ Անդ, էջ 51:

⁸² Անդ:

⁸³ Անդ, էջ 52:

յի ժողովի և իր բռնած դիրքերը միանգամայն ճիշտ են և հույսներին ոչ մի զիջում չի արվել, այլ իրենք հավատարիմ են մնում նախորդների ավանդներին: Տղայի առաջին և երկրորդ թղթերն; ինչպես տեսանք, ունենին «հարցումն խրատուց...» և «գիր ողջունի» բնորոշ վերնագրերը: Իսկ երրորդ թուղթը ոչ միայն խրատների խնդրանք չունի, այլև գրված է շատ սուր ոճով, որպես «պատասխանի թղթուն վարդապետին Գրիգորի Տուտեորդի կոչեցելոյ»: Բայց Տուտեորդու մեզ հասած ձեռագիր միակ թղթում չկան այնպիսի բաներ, որոնց դեմ այնքան խիստ բողոքում է Տղան: Եղև է գուցե մի ուրիշ թուղթ ևս, որը մեզ չի հասել: Բայց, եթե լիներ նման մի թուղթ, դրա էությունը պիտի երևար թե՛ իր՝ Տուտեորդու թղթից և թե՛ Տղայի գրած թղթերից: Երրորդ թղթում գնում է սուր բանավեճ այն խնդրի շուրջը, թե՛ եկեղեցիների միությունն ինչպե՞ս է իրավացի՝ Տղան, թե՛ Տուտեորդին: Տղայի թուղթն սկսվում է նրանով, որ մարդկային լավագույն առաքինություններն են համաստությունը, խրատասիրությունը և հնազանդությունը: Սակայն այս երեքից և ո՛չ մեկն էլ չի երևում Տուտեորդու նամակում, — ասում է Տղան. «Իսկ զառի ձենը այժմու գրեալքս ոչ այսպէս իմացաք բան խրատական իբրև ի ծերագոյն հօրէ»⁸⁴: Ապա Գրիգոր Տղան Տուտեորդու այս թուղթը շատ ուշադիր կարդալուց հետո, հետևյալ գնահատականն է տալիս. «Այլ զքոյս ծանեաք հաւաստի զի աղմկեալ մտաց էր և ամբոխեալ հոգւոյ, որ և այսոքիկ շարին ճանաչին մասունք... վասնզի ոչ խրատական էր, այլ հրամայողական, ոչ խաղաղարար, այլ խոտվարար, ոչ ուղղադատ, այլ թշնամաբար, ոչ իրաւացի, այլ սուտակասպաս մտօք, ոչ ըստ կանոնական դատողութեանն, այլ ըստ հացկատակացն բանից, փաղաքշելով իբրև զանգէտս ոմանս գտունդ դաւանութեան յոգունց հանդերձ իմաստուն բնակչօք»⁸⁵:

Եթե Տուտեորդու թղթում ակնարկ անգամ չկա այն մասին, որ Տղան խոտորվել է դավանանքի ճիշտ ուղուց, դիմել է նորաձևությունների, ապա որտեղի՞ց են վերցված վերևում մեջ բերված խոսքերը: Եթե իր առաջին և երկրորդ թղթերում Գրիգոր Տղան «խորհրդատու հայր» է համարում Տուտեորդուն, գրում է, թե ինք հույսների հետ վարվել է այնպես, ինչպես նա էր խորհուրդ տալիս, իսկ հիմա այդ խորհրդատու ծերունու գրածը ահա՛ թե ինչի է նման. «Այլ զի ընդ բազում բանս ձեր կարկատանս և ստա-

յօդ անցի և նայեցայ ուշիմ մտօք, և ոչ տեսի ի նոսա ծաղկելի և անուշահամ պտուղ... քանզի եռանդոտ և փայլականացեալ սրտէ յառաջ բերի վիճաբանութիւն և կոխ»⁸⁶:

Եվ ապա, Տուտեորդին իր մի թղթում գրում է, որ ինքը շատ ուրախ է Գրիգոր Տղայի ընթացքից, որով նա, հենց իր գործունեության սկզբից, իբրև պաշտպան է հանդես գալիս նախորդների գաղափարների, գործերի, Հայ Եկեղեցու ինքնուրույնության, և այս ամենի համար գովում է նրան, որ եթե միշտ այդպես լինի, ապա «պայծառացին ընթացք լեզուիքո աւետարանել զհաւատապնդութեան և առաւել հնչեցցին քան զգնագական Ահարոնի: Եթէ այդպէս արացես և դոյնպէս խօսեսցես... եղիցին քեզ և ամենայն Եկեղեցւոյ երկինք և երկիր, արեգական ոսկեճաճանչ Աւետարանին մաքրութեամբ»⁸⁷: Իսկ Գրիգոր Տղայի տպագրված պատասխան թղթում, ընդհակառակը, կան քաղվածքներ, որ իբր թե Տուտեորդին Տղային մեղադրել է սխալ ընթացքի՝ Քաղկեդոնի դավանանքի կողմնակից լինելու համար: Բայց այդպիսի բաներ Տուտեորդու գրած թղթում չկան: Տուտեորդուն վերագրվող քաղվածքների դեմ Գրիգոր Տղան հակաճառելով իր պատասխան թղթում, ահա թե ի՛նչ է գրում. «Ձքաղկեդոն ոչ գիտեմք... հաւատափոխ ոչ լինիմք ըստ քոյդ տարակարծ մտաց»⁸⁸: «Հարցումն խրատուց» թղթում, Գրիգոր Տղան Տուտեորդուն մեծարում է «ճոխացեալ բանականան և արդիւնականան գործունէութեամբ», «մատակարար բանի», «իմաստուն հայր» և այլ որոշիչներով ու խոսքերով, իսկ տպագրված պատասխան թղթում գրում է միանգամայն հակառակը, թե «հեռի էք ամենայն գիտութենէ Հին և Նոր Կտակարանաց, մանաւանդ թէ աստուածագիր սուրբ հաւատոյս կանոնական սահմանքն ոչ գտանին ի միջի ձեր»⁸⁹: «Հարցումն խրատուց» ձեռագիր թղթում Գրիգոր Տղան պատրաստակամություն է հայտնում Տուտեորդուն և խնդրում, որ իրեն հետ ունենա գրավոր կամ բանավոր սերտ կապ, իսկ պատասխան տպագիր թղթում առաջարկում է Տուտեորդուն՝ իր հետ խզել բոլոր տեսակ կապերը. «Արդ, յայսմհետէ լռեալ դադարեսցէ զքոյն առ ի մէնջ գիր և բան, մինչև լռեալ դադարեսցիս ի հպարտութեան սրտիդ»⁹⁰: Պատասխան տպագիր թղթում Տուտեորդին մեղադրվում է կաթողիկոսի

⁸⁴ Անդ, էջ 24:

⁸⁷ Ձեռ. № 2966, էջ 56:

⁸⁸ «Նամականի», էջ 50:

⁸⁹ Անդ, էջ 10—11:

⁹⁰ Անդ, էջ 51:

⁸⁴ Գրիգոր Տղա, «Նամականի», Վենետիկ, 1865, էջ 8:

⁸⁵ Անդ, էջ 5:

կողմից, որ նա իբր թե հափշտակել է վանահոր պաշտոնը, չի ենթարկվում կաթողիկոսին, ինքնագլուխ է, ոչինչ չի անում, միայն ուսում ու քնում է և ապրում է որպես պորտաբոյծ անբան: Իսկ «Գիր ողջունի» ձեռագիր թղթում բոլորովին հակառակ վերաբերմունք կա Տուտեորդու նկատմամբ: Այստեղ Տուտեորդու խրատներն ու խորհուրդները համարվում են իբրև քաղցածի համար՝ հաց, ծարավածին՝ ջուր, խավարյալին՝ լույս, տրտմյալին՝ ուրախություն, որ նա եկեղեցական հավատարիմ, անշահասեր և քրտնավաստակ գործիչ է, զրա համար էլ Տղան, երկար կյանք ցանկանալով նրան, գրում է հետևյալը. «... Եւ զմարմնոյդ սրբոյ կենդանութիւն առողջութիւն... Երկարաձիգ ամօք ի պէտս հաւատարիմ տնտեսութեան առ ի յինքնէն արեամբ շինեալ տանն եօթն սեամբ... զի հաստատուն մնասցէ տունն և անքակտելի, մարմինն մեծաջան և քրտնավաստակ աշխատութեան ձերով»⁹¹:

Վերջապես, պատասխան թղթում Տղան մեղադրում է Տուտեորդուն նաև կրավորականության և անգործության մեջ, այսպես. «Դուք զառաջինն հրամայեցիք մեզ, եթէ զիշեր է և երեկոյ, և ի վերջինս նկատել և լոնել... Արդ, զի՞նչ առ այս, ոչ հերկեսցուք և ոչ սերմանեսցուք, ոչ զնաւելոցն առաջ կալցուք զգործ, լոնեսցէ՝ և իրավճար պատեբաղմողին յօժարութիւն: Այլ են անդր մի՞թէ ոչ ունեցիմք վստահութիւն ի միոյն ամբարեւ զբաղմարեղուն արմտիս»⁹²:

Իսկ «Գիր ողջունի» թղթում Գրիգոր Տղան պատմում է Տուտեորդուն, թե կրոնական հարցերի շուրջ մենք շատ վիճեցինք Հռոմ-կլայի ժողովում, շատ էի ցանկանում ձեր ներկայությունը... «և այսու յաղագու ի խնդրի ելաք ձեզ իբրև քաջ զինակցաց բերել մեզ՝ եթէ իցէ առ ձեզ հնդկային պողովատիկ սուր և կամ ամբազոյն վահան և կամ զրահ հաւատոյ և սաղաարտ փրկութեան, զի եթէ հատմանէն՝ կտրեսցուք և եթէ պահպանութեամբ՝ ամբացուցուք և զամենայն մեխեալ նետս շարացն շիջուցուք հանցանաց»⁹³:

Այսպես, մի թղթում Տուտեորդին մեղադրվում է որպես կրավորական, անգործ մարդու, իսկ մյուսում նա համարվում է հավատի ճակատում քաջ զինվոր, հատու զենք, ակտիվ պայքարող: Մեզ հայտնի այս երեք թղթերում Տուտեորդուն վերաբերող հակասությունների օրինակները կարելի է երկար շարունակել, բայց մեր կարծիքով,

վերևում բերվածներն էլ բավական են, մտածելու համար, թե իրոք ի՞նչպես կարող էր Գրիգոր Տղա կաթողիկոսը Տուտեորդուն մի տեղ անվանել իմաստուն, մյուսում՝ տգետ, մեկում՝ խրատող, մատակարար բանի, մյուսում՝ հացկատակ, սուտակասպաս, մի տեղ՝ անգործ, եսամուլ, մյուսում՝ քաջ զինվոր, հավատի ախոյան, և այլն և այլն:

Հարց է ծագում, թե ինչու՞ Գրիգոր Տղայի և Տուտեորդու շտպագրված ձեռագիր թղթերի մեջ կա ընդհանուր կապ, ներդաշնակություն, փոխադարձ հարգանք, վստահություն և պատշաճ ոճ, իսկ Տղայի տպագրված «պատասխան» կոչված թուղթը իր էությունը ու ոգով չի մերվում, չի համապատասխանում ո՛չ Տուտեորդու և ո՛չ էլ իրեն՝ Գրիգոր Տղայի գրած մյուս թղթերի հետ: Այս բոլորից հետո, մի ուրիշ հիմնական հարց էլ է առաջ գալիս. արդյո՞ք այդ «պատասխան» ընդարձակ, ամբաստանագիր թուղթը ամբողջությամբ Գրիգոր Տղայի գրչին է պատկանում: Եթե այո, ապա ի՞նչպես հասկանալ վերևում բերված և ուրիշ հակասությունները: Եթե այս թուղթը իսկապես Գրիգոր Տղան է գրել, ապա կասկածի տակ են ընկնում Տղայի երկու և Տուտեորդու թղթերը: Մեր կարծիքով, այս վերջին թղթերի հեղինակների վրա չի կարելի կասկածել, որովհետև դրանց մեջ, ինչպես նշվեց, կա բովանդակության, ոգու և ոճի ընդհանուր կապ: Ուրեմն կասկածները պետք է կենտրոնացնել Տղայի տպագրված «պատասխան» թղթի շուրջը: Կարելի է նաև կարծել, թե Տղայի ձեռագիր երկու թղթերը գրվել են «պատասխան» թղթից առաջ, երբ Տղայի և Տուտեորդու հարաբերությունները լավ են եղել, իսկ հետագայում նրանց մեջ գծադրություն է ծագել, որի արդյունք է այս խստաբան թուղթը: Բայց այսպիսի կարծիքը անհիմն կլինի, որովհետև պիտի լինի որևէ լուրջ պատճառ, որ նրանց հարաբերությունը վատանար: Հռոմկլայի ժողովը վերջացել էր Տղայի՝ հույների հանդեպ բռնած դիրքին Տուտեորդին ոչ միայն հավանել, այլև, ինչպես տեսանք, գովել է. կրոնա-գաղափարական ուրիշ վեճեր այդ տարիներին, այդ երկու խոշոր հոգևորականների միջև չեն եղել: Ինչու՞ պիտի հանկարծ, առանց պատճառի, այդպես սրվել երկու բարեկամների հարաբերությունը: Մնում է ուրիշ պատճառներ որոնել: Մեր կարծիքով, այդ պատասխան թուղթն էլ Գրիգոր Տղայի գրածն է, բայց հավանաբար նրա մահից հետո, արևելյան վարդապետներին թշնամի և Տղայի այդ թուղթն ու կաթողիկոսի անունը օգտագործել ցանկացող մի հմուտ կիլիկեցի հոգևորական, վարպետորեն խմբագրել է այն և խստացրել

⁹¹ Ձև. № 2966, էջ 49:

⁹² «Նամականի», էջ 19—20:

⁹³ Ձև. № 2966, էջ 51:

ոճը: Տպագրված թղթում եղած վիճելու ձևը, տրամաբանությունը, ճարտասանական-պերճախոսական դարձվածքները, բանավիճելու սուր ոճը, շատ բաներով հիշեցնում են ներսես Լամբրոնացու՝ Լևոն Բ թագավորին ուղղված ամբաստանագիր կրքոտ թուղթը՝ գրված արևելյան վարդապետների դեմ: Նամակին լեզուն կծու է և խիստ, երգիծական դարձվածքներով ալ լեցուն, մինչև իսկ կաթողիկոսին վեհության հետ անհամաձայն, — իրավացիորեն նկատում է Մ. արքեպիսկոպոս Օրմանյանը, — և այս մեզ կթելադրե ըսել, թե նամակին խմբագրությունը Լամբրոնացիի գրիչն է ելած պետք է ըլլա»⁹⁴: Բացի այս, Օրմանյանը մեկ ուրիշ փաստ էլ է նշում. դա Լամբրոնացու այն ակնարկն է, թե «այլ անգամ եղև այս հարկս»⁹⁵, այսինքն Տուտեորդու նամակներին պատասխանելու հարկը:

Անհավանական չէ այն, որ «նամականի» ժողովածուի մեջ եղած Գրիգոր Տղայի «Պատասխանի թղթոյն վարդապետին Գրիգորի Տուտեորդոյն» խորագիրը կրող թուղթը հետագայում ըստ իր ցանկության խմբագրել է ներսես Լամբրոնացին: Վերջինս է խմբագրել (իհարկե ոչ այդչափ քմահաճ) նաև ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ը, այնտեղ եղած ծանոթագրությունները, կրոնական, դավանաբանական վեճերին վերաբերող շատ թղթեր, Հոռմկլայի՝ 1179 թ. ժողովի գործերը և այլն: Այս նամակի խմբագրելու խնդիրը շատ հետաքրքրական և ուշագրավ է, որով պետք է առանձնապես զբաղվել:

⁹⁴ Մ. արքեպիսկոպոս Օրմանյան, «Ազգապատում», 4. Պոլիս, 1912 թ., էջ 1480:

⁹⁵ Գրիգոր Տղա, «նամականի», Վենետիկ, Ս. Ղազար, 1865 թ., էջ 210:

Գրիգոր Տղայի թե՛ հույներին և թե՛ արևելյան Հայաստանի վարդապետներին գրած թղթերն ունեն և՛ պատմական և՛ գրական արժեք: Դրանք գրված են ո՛չ միայն մաքուր հայկաբանությամբ, մատչելի լեզվով և ամուր տրամաբանությամբ, այլև դրանց մեջ առաջ քաշված մտքերն ու գաղափարները, ցանկություններն ու նկրտումները հեշտությամբ և խորը ընկալելու համար հեղինակը մեծ ուշադրություն է դարձրել գեղեցիկ և ազդու խոսքի վրա և կիրառել այն Առանձնապես հյուսիսային վարդապետներին և Տուտեորդուն ուղղված թղթերում հետտրական, պերճախոսական ձևերի հետ միաժամանակ Գրիգոր Տղան լայն շափերով օգտվել է խոսքի նաև գեղարվեստական միջոցներից: Այլաբանությունները, փոխաբերությունները և մանավանդ համեմատությունները այդ թղթերը դարձնում են ազդու, հետաքրքրական և գեղեցիկ: Տեղին և վարպետորեն են օգտագործվել ժողովրդի անգիր բանահյուսությունից, Հին ու Նոր Կտակարաններից վերցված առակներ, ասացվածքներ և գեղարվեստական այլ դարձվածքներ: Թղթերում մտքերի հետ ներդաշնակորեն հյուսված, զգացմունք արտահայտող խոսքերը, բառերն ու բացականչությունները նույնպես շարադրանքին տալիս են գեղեցիկ ու աշխույժ տեսք և հաճախ պատճառում ընթերցողին: Ինչպես հետո կտեսնենք, այն գաղափարներն ու խոհերը, զգացմունքներն ու ցանկությունները, որոնք տեղ են գտել Գրիգոր Տղայի արձակ թղթերում, դրանք ամբողջությամբ դրսևորվել և իրենց արտահայտությունն են գտել նաև նրա չափածո գործերում:

(Շարունակելի)